



*ՊՐՈՖ. Վ. Վ. ԲՈԼՈՏՈՎ*

# ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՅՐՁԱՆՈՒՄ



Ոռուսիրէնից թարգմանեց  
ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆ



Արտապահ «Արարա» ամսագրից



Վ. Ա. Վ. Ա. Ր Շ Ա. Պ Ա. Տ

Էլեքտրաշարժ Տողարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911

Проф. В. В. БОЛОТОВЪ

# ИСТОРИЯ ЦЕРКВИ

Въ Периодъ Вселенскихъ Соборовъ

*Христіанское чтеніе*

*за 1911*

издание общества богословия

С. Петербургъ

Типографія М. Меркушова, Невск. пр. № 8

1911

# ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տեղերական ջուրավերի օրգանում

Հյուրած մայնացքը մակելիուղ ուժ միջնաբան զան  
դիմումութ բառ և չ յայլաւուն միջնաբան բիշմ  
մասի մայնացքը մ մայնացանաւուշ հաւուստասա՞ Յին  
ապօնաւ առ բնաւորույ մդմմդքանի պոյոյ խածածայդի միջ  
միջ զգած բառ մասի պրոյցյանմ բան և յուսու յամ  
տվածք յամ նաև պայմանական բան և յամուն մայնացքը

դիմութուուն:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հանգուցեալ Պրօֆ. Վ. Վ. Բօլոտովը ոռւսաց եկեղեցա-  
կան գրականութեան մէջ շատ յարդի տեղ է գրաւում՝ եկե-  
ղեցական պատմութեան վերաբերեալ իւր աշխատութիւն-  
ներով։ Ներկայթարգմանութիւնն ևս պատկանում է նրան և  
է Տիեզերական Ժողովաբերի շրջանի եկեղեցու պատմութեան  
վերաբերեալ նրա գասախօսութիւնների ժողովածուն, որ  
տպագրուել սկսուեց «Христіанскoe чтеніe» ամսագրի մէջ  
այս տարուայ փետրուարի համարից սկսած։ Հանգուցեալ  
Պրօֆեսորի այս աշխատութեան նախորդ մասը, որ մի մեծ  
հատոր է կազմում և ամփոփում է եկեղեցու պատմութիւնը  
մինչև կոստանդին Մեծը, մենք բաց ենք թողնում և սկսում  
յատկապէս այս շրջանից, որովհետեւ քրիստոնէութիւնն միայն  
այս շրջանում պետական կրօն դառնալով արագութեամբ  
աճում, բարգաւաճում և իւր զարգացման զագաթնակէտին  
է համնում։ Այդ շրջանի եկեղեցական կեանքն առաջ է բե-  
րում և հակառակորդներ, և դաւանաբանական վէճեր, որոնց  
վերջնական լուծման համար կարիք է զգացւում ընդհա-  
նուր՝ «Տիեզերական» կոչուած ժողովաբերը գումարելու։ Այդ  
Տիեզերական ժողովաբերի մէջ թէ ներքուստ՝ եկեղեցական  
կեանքի առաջ բերած բոլոր կնճոռոտ հարցերն են լուծում  
և դաւանաբանօրէն պարզաբանւում ու վերջնական հաս-  
տատութիւն գտնում և թէ արտաքուստ՝ եկեղեցու և  
եկեղեցականների համար որոշ կարգ ու կանոն է մշակւում  
և սահմաններ գծուում, որոնց մէջ եկեղեցու կեանքի  
զարգացումը պիտի անսայթաք շարունակուէր։

Մեր եկեղեցին և, որովհետև Տիեզերական ժողով-ներից առաջին երեքին մասնակցել է և այդ ժողովների մէջ հաստատուած դաւանաբանական և եկեղեցական կեանքին վերաբերեալ բոլոր խնդիրներն ընդունել ու պահպանել, ուստի և մեզ հետաքրքրողը միայն այդ երեք Տիեզերական ժողովների շրջանի պատմութիւնը կլինի:

Թարգմանիչը

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս շրջանով մենք մտնում ենք եկեղեցական կեանքի մի նոր կազմակերպութեան մէջ, որ շատ մօտ է մինչև այսօր գոյութիւն ունեցող կազմակերպութեանը։ Նախորդ շրջանի եկեղեցական կեանքի իրական կողմը, գործունէութեան շրջանակը իրենց մանրամասնութիւնների մէջ մեզ համար շատ էլ պարզ և դիւրըմբոնելի չեն. — նահատակների արիւնով կազմուող մի նոր եկեղեցի, հալածուած, մերժուած, իրաւաբանօրէն չընդունուած և միևնոյն ժամանակ այնպիսի կեանքով ապրող մի հասարակութիւն, որն իւր համայնական կեանքի արտայայտութիւններին աշխատում է, որքան կարելի է, աւելի հասարակական կերպարանք տալ, որով և մեր առաջ ներկայանում է իրեւխիստ իւրատեսակ, արտակարգ երեսյթ ներկայացնող մի կազմակերպութիւն։ Այն հետաքրքրութիւնը, որ զարթեցնում է յետագայ եկեղեցական պատմութիւնը, — այնքան բարոյական բնաւորութիւն չէ կրում, որչափ գործնական-դրական։ Այս շրջանում եկեղեցական կեանքը ընդունում է աւելի սովորական կերպարանք, շատ հեշտութեամբ ամփոփում է առօրեայ փորձերով ստեղծուած արտայայտութիւնների մէջ։ Այս շրջանը միջնորդ գեր է կատարում — միայն ոչ ժամանակագրական տեսակէտից, — յետագայ եկեղեցական կեանքի և նրա հին շրջանի մէջ։ Այս շրջանի եկեղեցու խիստ եռանդուն կեանքը կենդանի կերպով է պատկերացնում նախորդ շրջանը, սակայն նա զարգանում է այնպիսի արտաքին յարաբերութիւնների մէջ, որոնք ընդհանուր էին ներկայ շրջանին։ Նոր ձևերի, և հին բովանդակութեան ու ոյժի այս զու-

գորդութիւնը խիստ ծանր հետևանքներ ունեցաւ եկեղեցական կեանքի համարեա բոլոր կէտերի վերայ:

Եկեղեցու եւ պետութեան յարաբերութեան հարցը իւր բնական դրութեամբ առաջին անգամ այս շրջանի մէջ ծագեց: Այս յարաբերութիւնները վեց դարերի ընթացքում այն ձևերն ընդունեցին, որոնք երկրորդական փոփոխութիւններով պահպանուել են մինչև այսօր քրիստոնեայ աշխարհի մեծ մասի մէջ: Նոյն իսկ այն յարաբերութիւնները, որոնք իբրև բացառութիւն մի քանի քրիստոնեայ պետութիւնների մէջ գոյութիւն ունին, — թէև հատուկառ, ունին և իրենց մի քանի օրինակներն այս շրջանի երեսյների մէջ:

Սյստեղ՝ հոռվմէական պետութեան սահմաններից դուրս եկեղեցու յարաբերութիւնները դէպի հեթանոս աշխարհն ընդունում են այն առաքելական-քարոզական բնաւորութիւնը, որ պահպանուել է նորա մէջ մինչև այսօր իսկ: Բազմութեան մի մասի յաջորդական ազդեցութիւնը միւսի վերայ, քրիստոնեանների աստիճանաւ-բար մուտքը հեթանոս ժողովրդի մէջ փոխարինում է քրիս-տոնեայ կամաւոր կամ ակամայ պաշտօնեանների ազդեցութեան, որը հեթանոս աշխարհում լինում էր արտաքին, մեծ մասամբ պատահական: Իսկ զրա հետևանքն եղաւ ոչ թէ գոյութիւն ունեցող եկեղեցու զօրացումը, այլ նրա մի այլ ճիւղի ծագումը:

Քրիստոնեայ համայնքների ընդհանրապէս ներքին յարաբերութիւններն այնպիսի հաստատուն ձևակերպութիւն ընդունեցին, որ ապագայի համար մնում էր նրա լոկ մանրամասն մշակումը: Նուիրապետական յարաբերութիւնների գլխաւոր կէտերն՝ աշխարհականների, և հոգևոր դասի, ստորին հոգևորականութեան դէպի եպիսկոպոսը, եպիսկոպոսութեան ներքին ճիւղաւորութիւնները մնում են միենոյնը: Եկեղեցական կառավարութեան ձևերը, պաշտօնեայ հոգևորականութեան դիրքը դէպի նուիրապե-տութեան անդամները, ձևաւորում են շատ պարզ կերպով:

Աստուածաբան մտքի պատմութիւնը  
կազմում է այս շրջանի ամենափառաւոր էջը, իսկ մի կողմով  
— մինչև անգամ յատկանիշ բնաւորութիւնն եկեղեցական  
կեանքի այդ կէտը հանդիսանում է կենդրոն, որին ձգտում են  
քրիստոնէական եկեղեցու բոլոր կենսունակ ոյժերը։ Այս  
շրջանում աստուածաբանական միտքը զարգանում է իւր ամ-  
բողջ գեղեցկութեամբ և ոյժով։ Նրա արտայայտութիւնների  
ոյժի մէջ, մեր ժամանակի համար իւր լայն ու խորին արտա-  
սովոր այն հետաքրքրութեան մէջ, որ աստուածաբանական  
միտքը առաջ է բերում հասարակութեան զանազան խաւե-  
րում—զգացուում է այս շրջանի անմիջական կապը նախորդի  
հետ, այն ժամանակի՝ երբ մարդիկ ապրում էին իրանց կրօ-  
նական համոզումներով և ընդունակ էին նրանց պաշտպանու-  
թեան համար անձնագոհ լինել։ Մեր շրջանի մեծ ներկայա-  
ցուցիչների գիտակցութեան մէջ ուղղափառութեան համար  
հերոսական տոկունութեանը փոխարինում է նահատակների  
հերոսութիւնը<sup>1)</sup>։ Անդադար, մի քանի դար տեսդ Աստուա-  
ծաբանական մտքի զանազան անընական երևոյթների դէմ  
մզած կոիւր, դաւանաբանական տեսակէտից ունենում է  
այնպիսի անգնահատելի հետևանքներ, որ նոյն իսկ պահ-  
պանողական բողոքականութիւնը չէ մերժում նրանց բարձր  
նշանակութիւնը։ Այս շրջանում քրիստոնէական հարցերի  
լուծումը՝ Ա. Հոգեոյ, մարդեղութեան, շնորհաբաշխութեան  
մասին այնպիսի ձևերով արտայայտուեցին, որոնց դէմ  
այժմեան քննադատական աստուածաբանութիւնը կա-  
րող է շատ զօրեղ փաստեր առաջ բերել, սակայն չէ կարող  
նրանց փոխարինելու համար ամբողջական մի բան և կամ  
նոյն իսկ իւր առաջ բերած տարածայնութիւնների յաջող  
լուծման փորձը տալ։ Քրիստոնէութեան բովանդակութեան  
յայտնագործութեան հետ Տիեզերական ժողովների մէջ  
մեծ ոյժով զարգանում է և անհատական աստուածաբա-  
նական միտքը։ Այստեղ յունական եկեղեցին առաջ է  
բերում խորին և մանրակրկիտ աստուածաբանների ամբողջ

<sup>1)</sup>) Athan. ep. ad ep. Aeg. et Lib, n. 21, 23 p. 231; 588 sq.

շարքեր, որ ուրիշ շրջաններ կպարծենային եթէ գոնեամի մի հատ թուել կարողանային։ Հռովմէական եկեղեցին էլ այստեղ իւր աստուածաբանական արտադրութեան ամենաբարձր կէտին է հասնում, հանդէս բերելով ամենալաւ աստուածաբաններ և բազմակողմանի կրթութեամբ օժտուած գիտնականներ։

Աստուածապաշտական կազմակերպութիւնն այս շրջանի վերջը, —յամենայն դէպս յունական եկեղեցում — իւր գագաթնակէտին է հասնում, և յաջորդ պատմութիւնը համարեանրա վերայ ոչինչ չէ աւելացնում։

Բարոյական կեանքն էլ այս գարաշրջանում մշակում է ճգնաւորական կեանքի նոր ձևեր, որ հին եկեղեցուն անծանօթ էր, և որն անփոփոխ պահպանում է արևելեան եկեղեցում, իսկ արևմուտքում գարգանում է գանազան տեսակներով։ Այս շրջանի քրիստոնէական կեանքի ընդհաննուր բարոյական մակերեսոյթը մօտենում է յետագայ շրջանին, որ միատեսակ ընդհաննուր պայմանների հետեանք է նրա յայտնութիւնների համար. որքան որ նա արտաքուստ ընդգարձակում է, այնքան էլ ներքուստ բարոյապէս թուլաննում է։

Վերջապէս եթէ ուշադրութիւն դարձնենք բացասական կարգերի երևոյթների վերայ, — այն ժամանակ կտեսնենք, որ պատմութիւնն այս շրջանումն էլ անպայման յաջողութիւն է ունեցել։ Յաջորդ շրջանը բնորոշում է արևմտեան և արևելեան եկեղեցիների բաժանումով և պապականութեան արագ ու արտասովոր զարգացումով։ Սակայն եկեղեցիների բաժանումը, աչքի առաջ ունենալով բոլոր հանգամանքներն ու պատճառները, ոչ միայն այս շրջանի մէջ հնարաւոր էր նկատուած — այդ պատճառները քրիստոնէութիւնից առաջ գոյութիւն ունէին, — ոչ, այդ բաժանումը տեղի ունեցաւ հէնց յայտնադործութիւններով. յունական և հռովմէական եկեղեցիները արդէն 35 տարի (484—519) շարունակ վէճի մէջ էին, և իսկապէս կարող էին համոզուել որ մէկը առանց միւսի էլ գոյութիւն ունենալ կարող է։ Նոյնպէս և պապականութիւնը

այս շրջանում ոչ միայն սկիզբն առաւ այլ և աննկատելի կերպով իւր զարգացման բարձր աստիճանին հասաւ։ Նիկողայոս Ա, որով սկսում է եկեղեցական պատմութեան յաջորդ շրջանը, իրենից յետոյ աչքի ընկնող թեկնածուներ ունէր, իսկ նա իւր մտքերով և գործունէութեամբ կատարելապէս միջնադարեան պապերից մէկն էր։



պատմութեան և այս առաջ մըսին ու Առաջին առաջական ավագութեան զնուայ բանապարհու որդի Խորուն  
առաջական մասնացութիւն է Նախայի խոր և ուստի առաջին բարձր գույն բանի շնորհը առաջին բարձր մասն  
ուրի և խորուն զամ ամ ամ առաջ ածառնածեմն ուժի առաջ առաջուն

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցու պատմութեան այս շրջանն սկսւում է հոռվ-  
մէական կայսեր քրիստոնէութիւն ընդունելովը։ Պետու-  
թեան՝ դէպի Եկեղեցին ունեցած թշնամական յարաբերու-  
թեան ընականի, իրաւականի փոխուիլը, քրիստոնէական  
կրօնը պետական յայտարարելը—սոքա փաստեր են, որոնք  
իրենց էական տարրով Եկեղեցու միայն արտաքինին են  
վերաբերում, և որոնք այնքան հարուստ հետևանքներ  
ունեցան, որ չէին կարող Եկեղեցու ներքին յարաբերու-  
թիւնների կարգաւորման վերայ առանց ազդեցութեան  
մնալ։ Նոյն իսկ Եկեղեցական կեանքի այսպիսի խորին  
ներքին կողմը, ինչպէս աստիճանաբար զարգացող հաւատի  
վարդապետութեան բացատրութիւնը, իւր պատմական  
յայտնութիւնների մէջ սերտ կախումն ունի Եկեղեցու  
պետութեան հետ ունեցած յարաբերութիւնների փոխուե-  
լուց։ Եթէ քրիստոնէական Եկեղեցին մնար իւր նախկին  
դրութեան մէջ,—ամբողջ դարեր կանցնէին առանց զգալու  
Տիեզերական ժողովների կարիքը։ Հերիտիկոսների հետ  
մղած կոփիւը ուրիշ բնաւորութիւն կունենար և Եթէ նրա  
դաւանաբանական հետևանքները միենոյնը լինէին, այն  
ժամանակ շատ հաւանական է, որ նրա պատմութիւնը  
բոլորովին այլ կլինէր։

Եկեղեցու և պետութեան մէջ Եղած նոր յարաբերու-  
թիւնների նշանակութիւնը քրիստոնէական Եկեղեցու հա-  
մար տարբեր կերպով են հասկանում։ Գօդֆրիդ Արնոլդի  
օրերից սկսած Եկեղեցական գրականութեան պատմութեան

մեծ մասի մէջ սովորութիւն է մտել՝ ողբալ այդ փոփոխութիւնը։ Բողոքական հեղինակները յաճախ են գանդատում և կոստանդնի շրջանից են նշանակում եկեղեցու «աշխարհականացումը»։ Այս հայեացքի խիստ զարգացումով, երկու շրջանների տարբերութիւնը հակադրութիւնների է հասնում, և եկեղեցական կեանքի մէջ գժտութիւն է ենթագրւում։ Թարմ, եռանդով և կենսունակութեամբ լի հինքրիստոնեանների կեանքը տեղի է տալիս թոյլ բիւզանդականութեան, բարոյական ազատութիւնը՝ կեսարօ-պապականութեան, բռնակալութիւն թէ արտաքուստ և թէ ներքուստ։ Բարոյական գաղափարների ձգտման փոխարէն սկսւում է հետապնդումն նիւթական բարօրութեան և արտաքին գերիշխանութեան։ Նմանօրինակ հայեացք՝ իւրիստ ձեռվ մեր մամուլի մէջ ներկայացնում էին իբրև ուղ և ծուծ ազատամիտ գիտնականութեան։

Սակայն, այն աստուածաբաննը, որ իւր գաւանաբանական սկզբունքներով կոստանդնին յաջորդող գարում զարգացման նոր շրջան է տեսնում, երբ եկեղեցական պատմութիւնը ոչ միայն կանոնաւոր, այլ շատ տեսակէտից օրինակելի ձեռքի մէջ է մտնում, — հաճոյքով կնկատէ, որ նոյն իսկ բողոքական դրականութեան մէջ Արնողի հայեցակէտը այժմ շատ յետադէմ է համարւում։ Այն գիտնականները, սրոնք վերջին ժամանակներս մեզ հետաքրքրող հարցն այս կամ այն կողմից շօշափել են, չեն ընդունում այդ երկու շրջանի մէջ ոչ մի գժտութիւն և կոստանդնին պատասխանատու չեն համարում այն բոլորի համար, ինչով որ մեր շրջանի եկեղեցական կեանքն անօգուտ կերպով զանազաննուում է նախորդից։ Կոստանդնի ստեղծած դրութիւնը մեծ մասամբ նպաստեց բանալու և յայտնագործելու այն մութ կողմերը, որ ծածկուած էին եկեղեցու նախորդ պատմութեան մէջ։ Եւ շատ դժուար չէ համոզուել այս հայեցակէտի ճշտութեան մէջ։ Հակառակ տեսութիւնը մի կողմն է թողնում ժամանակագրութիւնն այնպէս լիովին կերպով, որ նրան կարելի է մեղադրել թուերի անճշտութեան համար։

Եւ իրօք, կոստանդնի շրջանի քայքայուող ազդեցութեան ամենախայտառակ ներկայացուցիչներ համարում են այն եպիսկոպոսներին, որոնք պալատականը աւելի էին գերադասում եկեղեցականից, որոնք կայսեր բարեացակամութեան համար պատրաստ էին զոհել և իրենց աստիճանի արժանապատռութիւնը և դաւանաբանական համոզումները։ Մի խումբ գիտնականների ընդհանուր կարծիքով այդ տեսակ եպիսկոպոսներից էր Եւսեբիոս Կեսարացին։ Սակայն, արդեօք այդ տիպի եպիսկոպոս կոստանդինը ստեղծեց։ Ժամանակագրական տեղեկութիւնը մեզ հաղորդում է, որ Եւսեբիոսը հաւանականօրէն ձնուել է 253—259 թուականներին, որովհետև 313 թուականին նա արդէն 54 տարեկան հասակն առած մարդ էր և հաւանականօրէն Կեսարիոյ եպիսկոպոս։ Հետեւապէս կոստանդին Մեծի ժամանակ նա բոլորովին կազմակերպուած և բարոյապէս հաստատուն բնաւորութիւն էր, որը նոր թագաւորութեան քայքայւող ազդեցութեանը պէտք է դիմադրէր։ Նոյն տիպի մի ուրիշ եպիսկոպոս—Եւսեբիոս Նիկոմիդիացին հաւանականօրէն Եւսեբիոս Կեսարացու հասակակից էր։ 320 թուականներին նա արդէն Բերիտոսի թեմը փոխել էր Նիկոմիդիոյ թեմի հետ։ Հետեւապէս այս կիսապալատական եպիսկոպոսն էլ կրթուել էր ազատ, կեսարօ—պապական քահաղի առաջ ծունկ չճկող Դիսկղետիանոսի շրջանի հահատակների եկեղեցու բարերար ազդեցութեան տակ։ Մի խօսքով, ժամանակագրութիւնն ասում է, թէ կոստանդնի թագաւորութիւնն այնքան երկարատև չէր, որ այդ ժամանակ եկեղեցու մէջ առաջնակարգ տեղ բռնել կարողանային նոր ազդեցութեամբ կրթուած անձնաւորութիւններ։ մի միայն Ուրսակէսը և Վաղէնտը, որոնք կոստանդնի ժամանակ այնպիսի խայտառակ դեր խաղացին, բարոյապէս մեծացան եկեղեցական կեանքի նոր պայմանների մէջ։ Եկեղեցական միւս բոլոր գործիչները, որոնց հետ կոստանդինը յարաբերութեան մէջ էր, իրենց կրթութեամբ պատկանում են նախորդ շրջանին և իրենց գիրքի համար պարտական են բիւզանդական ազդեցու-

թեամբ դեռ չխմորուած հաւատացեալների ազատ ընտրութեանը:

Եթէ յիշատակենք և մի քանի մանրամասնութիւններ այդ շրջանի վերջին տասնամեակի կեանքից, կտեսնենք, որ Կոստանդնի ժամանակակիցները գործում են նոյն ուղղութեամբ, որով գործել կարող էին իրեն նախորդները, և որոնց ջնջեց Դիոկղետիանոսի հալածանքը: Կոստանդնի Մեծի ժամանակի մարդիկ, կայսեր հետ ունեցած իրենց գաշը շատ բարձր են գնահատում, սակայն պակաս չէր գնահատում, օրինակ, այդպիսի կապը կայսեր հետ նաև Թէոն Եպիսկոպոսը, որ Դիոկղետիանոսի սենեկապետին յայտնի ծրագիրը տուեց: Կոստանդնի շրջանի Եպիսկոպոսութիւնը իւր շարքերում թւում է շատ անարժան մարդկանց: Ինչպէս որ Եւսեբիոսից իմանում ենք, Դիոկղետիանոսի ժամանակի Եպիսկոպոսներն էլ իրենցից իրեկ կրօնական և բարոյական լուսատու աստղեր չեն ներկայացնում, և նրանց գործունէութիւնն այնպիսի գոյն ունէր, որ մեր պատմագիրը ստիպուած լուսութեամբ է անցնում:

Համեմատելով առաջ եկած փոփոխութեան գանազանատեսակ հետևանքները, մենք ոչ թէ բոլոր կէտերում անկումն, այլ ընդհակառակը յառաջադիմական շարժումն կտեսնենք։ Եկեղեցական կեանքն իւր սովորական ձևերի մէջ է մտնում, որ պահպանում է նաև յաջորդ պատմութեան ընթացքում։ Իսկ եկեղեցական պատմութեան իսկական շրջանը յայտնագործող իրողութիւնը վիճաբանութիւնների առարկայ կլինի մինչև այն ժամանակ, մինչև որ չի գտնուի եկեղեցու և պետութեան մէջ դադափարական յարաբերութիւնների ձևը։ Փորձենք բացատրել նրա հետևանքի իսկական ծաւալը և դաշն կապող երկու գործօնների—եկեղեցու և պետութեան մասնակցութեան չափը։

## I. ԿՈՍՏԱՆԴԻՒՆ ՄԵԾԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ<sup>1)</sup>)

Նոր դաշնակիցների յարաբերութիւնների հաստատութեան եղանակը շատ բանով էր կախուած քրիստոնեայ առաջին կայսեր սեպհական հայեցակէտից, այն փաստերից, որոնցով առաջնորդում էր նա քրիստոնէութիւնն իւրացնելու համար, նրա դէպի նոր հաւատն ունեցած տրամադրութեան անկեղծութիւնից:

Բողոքական շատ գիտնականների համար անվիճելի մի փաստ է, որ Կոստանդինը ներքին համոզմամբ չէ քրիստոնէութիւն ընդունել: Եթէ իրօք ճշմարիտ է այդ, այն ժամանակ եկեղեցու համար այդ փաստը յաղթութիւն չի կարող համարուել, և նոյն իսկ հարց կծագի թէ ինչու եկեղեցին իւր ծոցն ընդունեց այդպիսի մարդուն: Սակայն քրիստոնեայ դառնալու այս ձեի բացատրութիւնը («առանց ներքին համոզման») գործի էութիւնը չի փոխում, և հաւատն ընդունելու փաստն զարձեալ կարօտում է բացատրութեան. Եթէ Կոստանդինը քրիստոնէութիւն ընդունեց առանց ներքին համոզման, այն ժամանակ ի՞նչ պատճառներ դրդեցին նրան այդ քայլն անելու:

Եկեղեցու հին պատմապիրներից և առաւել Եւսեբիոս Կեսարացուց բոլորին յայտնի է, որ 312 թուին Մակենտի հետ վճռական պատերազմից առաջ Կոստանդինը

<sup>1)</sup>) Հմմտ. Th. Brieger Constantin der Grosse als Religionspolitiker Gotha, 1880, J. Burckhardt, Die Zeit Constantins des Grossen. Leipzig, 1880. Hauck's Realencyclopädie für protest. Theologie und Kirche, գրք. X, 757 – 58. V. Schultze, Konstantin der Grosse յողուածը. — Հմմտ. А. Спасский, Обращение императора Константина Великого въ христианство, «Богословский Вѣстникъ» 1904, դեկտեմբեր և 1905 թուի յունուար: А. Е.